ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Ստեղծագործության նկատմամբ հեղինակային

բացառիկ իրավունքները փոխանցելու մասին

«27» ապրիլի 2017թ. ք. Երևան

«Բյուրոկրատ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, ի դեմս ընկերության տնօրեն Արտաշես Հովհաննիսյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և գրքերի հեղինակ Աբգարյան (Քեշիշյան) Գայանե, անձնագիր՝AK 0517275, 048 (այսուհետ՝ Հեղինակ), մյուս կողմից, միասին կոչվելով Կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Հեղինակը Պատվիրատուին է փոխանցում «Հանելուկներն այբուբենով», «Հանելուկներն այբուբենով (դասական ուղղագրութեամբ)», «Ոսկետառ այբուբեն 2 (դասական ուղղագրութեամբ)», «Ոսկետառ այբուբեն 2» գրքերի նկատմամբ հեղինակային բացառիկ (գույքային) իրավունքները սույն պայմանագրով նախատեսված ժամկետներում և պայմաններով օգտագործելու համար:

1.2. Գրքերի տեխնիկական բնութագրերը Հավելված 1-ում:

1.3. Պատվիրատուն պարտավորվում է Հեղինակին հատուցում վճարել սույն պայմանագրով նախատեսված չափով և կարգով:

1.4. Հեղինակը երաշխավորում է, որ հանդիսանում է Օբյեկտի նկատմամբ հեղինակային իրավունքի իրավատերը:

1.5. Սույն Պայմանագիրն իր գործունեությունը պահպանում է մինչև 2017 թվականի դեկտեմբերի 31-ը:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Սույն Պայմանագրի համապատասխան Հեղինակի կողմից Պատվիրատուին է փոխանցվում հետևյալ իրավունքը՝

Օբյեկտն օգտագործել Պատվիրատուի ֆիրմայի անվանման ներքո

2.2. Պատվիրատուն սույն պայմանագիրը ստորագրման պահից հետո՝ 60 օրվա ընթացքում Հեղինակին վճարում է 400.000 (չորս հարյուր հազար) դրամ ներառյալ հարկերը:

2.3. Պատվիրատուն Օբյեկտն օգտագործելու ընթացքում պարտավորվում է պահպանել Հեղինակի ոչ գույքային իրավունքները և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պաշտպանել Օբյեկտն այլ անձանց ապօրինի օգտագործումից:

3. Կողմերի պատասխանատվությունը

3.1. Սույն Պայմանագրով իր պարտականությունները չկատարած կամ անպատշաճ կատարած Կողմը հատուցում է մյուս Կողմին՝ դրանով պատճառված վնասները:

3.2. Պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով շահույթ ստացած

Կողմը պարտավոր է մյուս Կողմին, վնասների հետ մեկտեղ, հատուցել նրա բաց թողնված օգուտը՝ ստացված եկամուտներից ոչ պակաս չափով:

4. Պայմանագրի լուծումը և փոփոխումը

4.1. Փոխադարձ գրավոր համաձայնության դեպքում Կողմերը կարող են վաղաժամ լուծել սույն Պայմանագիրը:

4.2. Հեղինակը իրավունք ունի լուծելու Պայմանագիրը հետևյալ դեպքերում՝

ա) Պատվիրատուի կողմից Հեղինակին սույն Պայմանագրով կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված վարձատրությունը չվճարելու դեպքում,

բ) Սույն Պայմանագրով նախատեսված ՀՀ տարածքից դուրս ստեղծագործությունների օգտագործման դեպքում:

4.3. Սույն Պայմանագրի բոլոր փոփոխությունները և լրացումները պետք է կատարվեն գրավոր, և պատշաճ ձևով ստորագրվեն Կողմերի կողմից:

5. Վեճերի լուծման կարգը

5.1. Բոլոր վեճերը և տարաձայնությունները, որոնք կապված են Կողմերի՝ սույն Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման հետ, լուծվում են բանակցությունների միջոցով:

5.2. Բանակցությունների միջոցով վեճը չլուծելու դեպքում վեճը լուծվում է դատական կարգով:

6. Եզրափակիչ դրույթներ

6.1. Բոլոր այն հարցերը, որոնք կարգարվորված չեն սույն Պայմանագրով, կարգավորվում է ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

6.2. Սույն Պայմանագրի կատարաման ընթացքում ծանուցումները Կողմերը միմյանց պետք է ուղարկեն գրավոր:

6.3. Սույն Պայմանագիրը կազմված է երկու հավասարազոր օրինակներից, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկ օրինակ:

7. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու
«Բյուրոկրատ» ՍՊԸ
Գործ.հ. ք. Երևան, Սարյան 19
Իրավ. Հ. ք. Երևան, Վրացական 8/32
"Կոնվերս Բանկ" ՓԲԸ
Հ/Հ 1930058048700100
ՀՎՀՀ 00083989
Տնօրեն Ա. Հովհաննիսյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Հեղինակ
Գայանե Աբգարյան (Քեշիշյան)
Հասցե՝ ք. Երևան, Լեփսիուսի 37 շ., 28 բն.
Անձնագիր՝ AK 0517275
Սոց. քարտ 7511670482
Ակբա Կրեդիտ Ագրիկոլ Բանկ ՓԲԸ
Հ/Հ 220302653526000

(ստորագրություն)